

Վահրիճ անդամ, որ Յովնան տեսնելուն մեծ կասկածի մեջ էր իր ձիուն համար, երբ տեսաւ, որ նա գլուխն առած հետեւակ առջեւէն կ'երթար միշտ, շատ գոհ էր, եւ Յովնան ու հետ հաշտ բոլոր սրտանց:

Մուշեղ եւ երկու Վահրամները միեւնոյն սենեկին մէջ բանտարկուեցան եւ երկրորդ օրը Սասնոյ լեռը ապաստան եալ ութ-տասը իշխանագուն մարդիկ, նոյն չափ մ'էլ երեւելի գիւղապետք, շրջակայ վանաց առաջնորդք եւ մեզ ծանօթ Գուրգէն եւ Խոսրով ամենքն ատեան կազմեցին ու նստան:

Հոն բերուի ցան Մուշեղ Վահեւունի, Վահրամ Տրունի եւ Վահրամ Գնունի թիկնապահ մէկ կը սղմեն, եւ Յովնան Խութեցի իբրեւ դատախազ ամբաստանեց այս երեքն էլ թէ ինչպէ՛ս սոքա նկանի բերդին պաշարման ժամանակ գաղտնի պատգամաւոր եւ նամակ դրկեցին Բուղայի՝ խոստանալով մատնել զաշոտ Արծրունի եւ բերդը նորաձեռքը յանձնել եւ թէ ինչպէ՛ս նոյն նամակին մէջ մատնութիւնը յետին ծայր վատութեան հասցնելով իմաց կ'ուտային թէ Գուրգէն Աշոտս եղբայրը ո՞ր կը գտնուէր եւ ինչչա՛րի զօրք, զօրութիւն եւ ինչ բերդեր ունէր: Կ'աւելցնէր նաեւ Յովնան իւր ամբաստանութեան մէջ եւ երկայն ու տեղն ի տեղ կը պատմէր թէ ինչպէ՛ս պաշարման ատեն Աշոտոյ հրամանները կը խարդախէին եւ չէին կատարէր, եւ թէ երբ Աշոտ իմանալով իրենց կեղծաւորութիւնն ու նենգութիւնը եւ ուզելով հեռացնել զիրենք ամրոցէն հրամայեց երթալ թշնամի զօրավարին հետ խօսիլ եւ կամքն իմանալ, նոքա յայտնելով իրենց դաւաճանութիւնը եւ կեղծաւորութեան դիմակը վար առնելով՝ «Դու պետք է երթաս եւ խօսիս իրեն հետ որպէսզի ամբաստանութեան կասկածը վերանայ վրայէդ» պատասխանեցին. եւ երբ Աշոտ ամենայն քաղցրութեամբ իւր բարիքները, պարգեւները, սերը կը յիշեցնէր, իւր առատաձեռնութիւնքը յուշ կը բերէր, որ իւր գանձին աղքատութեան միւնչեւ պատճառ եղած էին, երբ այսպիսի տարաձայնութեան հետեւանք ցոյց կ'ուտար թէ իւր բոլոր ընտանեաց եւ երկրին սրոյ եւ գերութեան պատճառ պիտի լինէին, դոքա՝ այդ երեքը՝ իրենց քանի մը միաբանելովքը՝ ամենայն խստասրտութեամբ կը պատասխանէին. «Չենք կարող թագաւորական ահագին